# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի մայիսի 13-ին կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05-109 պայմանագրում 2016թ-ի օգոստոսի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները մատակարարվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 2 և N 3 հավելվածները հաստատվել են նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 4.1.1, 9.2 և 9.4 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 010-511-788, 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**13.05.2016թ. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ**
**ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05-109**
**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

«10» օգոստոսի 2016թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաղդյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 13.05.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05-109 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1, 9.2 և 9.4 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրի 4.1.1 կետով նախատեսված Ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը.

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և N 3 հավելված հանդիսացող ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի և հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011005841

Հ/Հ՝ 900011192052

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար Կ. Փոլադյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

***«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ***

Հասցե՝ ք. Երևան, Սունդուկյան 12 ա

ՀՎՀՀ՝ 01815551

Հ/Հ՝ 001-021021-001

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Տնօրեն Ա. Բաղդյան

/ստորագրություն/

Հավելված N 1
13.05.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05-109 պայմանագրի
<<10>> օգոստոսի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգ | հատ | 2 397 000 | 4 | 9 588 000 | 4 | **9 588 000** |
| | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016 թ. | | Ընդամենը | |
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | N 1 համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը |
| 2 | «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգ | հատ | 2 397 000 | 15 | 35 955 000 | 15 | 35 955 000 |
| Ընդամենը | | | | 19 | 45 543 000 | 19 | **45 543 000** |

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
Հ/Հ՝ 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար Վ. Փիլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Սունդուկյան 12 ա
ՀՎՀՀ՝ 01815551

Հ/Հ՝ 001-021021-001
«Էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Տնօրեն Ա. Ղալումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2

13.05.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05-109 պայմանագրի

<< 10 >> օգոստոսի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում (Ծրագիր՝ 03 03 01 08՝ ՀՀ դատարանների կարողությունների զարգացում) | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգ | - | - | - | - | 2 397 000 | 2 397 000 | 4 794 000 | 4 794 000 | 4 794 000 | 9 588 000 | 9 588 000 | 9 588 000 | **9 588 000** |
| | | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում (Ծրագիր՝ 03 03 01 05՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ) | | | | | | | | | | | | |
| 2. | «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգ | | | | | | | | 35 955 000 | 35 955 000 | 35 955 000 | 35 955 000 | 35 955 000 | **35 955 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011005841

Հ/Հ՝ 900011192052

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փ[illegible]յան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

***«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ***

Հասցե՝ ք. Երևան, Սունդուկյան 12 ա

ՀՎՀՀ՝ 01815551

Հ/Հ՝ 001-021021-001

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Տնօրեն՝ [illegible]

/ստորագրություն/

Կ.Տ